<<Հաստատում եմ>>

Նաիրի համայնքի ղեկավար

_____Ն. Մարգսյան

<<14>> ապրիլ 2023թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/1>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:**

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում **Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների փոսային նորոգման աշխատանքների** ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.** <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2023 թվականի մարտի 13-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.** Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. **Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.** <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով **երկու** հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Բալահովիտ-1>>ՍՊԸ	balahovit-1@yandex.ru հեռ. 091-42-83-94	000210331
2	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	lilit87_95@rambler.ru հեռ. 093-50-08-01	000210695

6. **Հայտով ներկայացված գները.**

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք(ինքնարժեքի և նախատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գին
Չափաբաժին 1 Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների փոսային նորոգում				
1	<<Բալահովիտ-1>>ՍՊԸ	79 244 639	14 848 928	95 093 567
2	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	87 000 000	17 400 000	104 400 000

7. **Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.** Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **2023 թվականի մարտի 23-ի թիվ 2** որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<Բալահովիտ-1>> ՍՊԸ –ն:

8. **Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.** <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/1>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. **Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.**

Չափաբաժին 1

2023 թվականի ապրիլի 13-ին Պատվիրատու՝ **Նաիրիի համայնքապետարանի**, որը գտնվում է **ք. Եղվարդ, Երևանյան 1** հասցեում, և Կապալառու՝ **<<Բալահովիտ-1>> ՍՊԸ -ի**, որը գտնվում է **գ. Բալահովիտ 8փող., 17-17/1** հասցեում, միջև կնքվել է **Նաիրի համայնքի կարիքների փողոցների փոսային նորոգման աշխատանքների** ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/1>>: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **95 093 567 (ինսունհինգ միլիոն ինսուներեք հազար հինգ հարյուր վաթսունյոթ)** ՀՀ դրամ:

10. **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. **Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.** Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)